*Կալիֆորնիայի Պաշտպանության և Փաստաբանության համակարգ*

# Տարածաշրջանային կենտրոնների կողմից վճարում՝ ապահովագրության համավճարումների, համաապահովագրությունների և պահումների համար

*Վերանայվել է 2014թ. նոյեմբերին, հրատ՝ #F102.09-Armenian*

Ուժի մեջ է մտել 2014թ. հունիսի 20-ից

Զարգացման ծառայությունների վարչությունը (DDS , Department of Developmental Services) Բյուջեի ծանուցման օրինագծի ((Budget Trailer Bill (TBL)) միջոցով փոխեց այն օրենքները, որոնք վերաբերում էին տարածաշրջանային կենտրոնների կողմից համավճարումներին, համաապահովագրությանը և պահումներին: Առանձնահատուկ փոփոխությունները նկարագրված են ստորև:

## Տարածաշրջանային կենտրոնը կարո՞ղ է վճարել իմ համավճարումների, համաապահովագրման և/կամ պահումների համար՝ համաձայն Լանթերմընի օրենքի (Lanterman Act)

Այո: Անչափահասների համար տարածաշրջանային կենտրոնը կարող է վճարել ապահովագրական համավճարումների, համաապահովագրության և/կամ

պահումների համար, եթե այդ ծառայությունն ընդգրկված է երեխայի անհատական ծրագրի պլանում կամ անհատական ընտանեկան ծառայությունների ծրագրում և անհրաժեշտ է՝ երաշխավորելու, որ Ձեր երեխան ստանում է այդ ծառայությունը [1], իսկ անչափահասների համար բավարարվում են հետևյալ չափանիշները՝

1) Երեխան ապահովագրված է առողջապահական խնամքի ծառայության ծրագրով կամ իր ծնողի/խնամակալի/խնամատարի առողջապահական ապահովագրի ներքո:
2) Ընտանիքի տարեկան համախառն եկամուտը աղքատության դաշնային մակարդակի 400 տոկոսի վրա կամ դրանից ցածր է:
3) Ծախսի համար պատասխանատու որևէ այլ երրորդ կողմ չկա:

Չափահաս <u>սպառողների համար</u> տարածաշրջանային կենտրոնը կարող է վճարել ապահովագրական համավճարումների, համապահովագրման կամ պահումների համար, եթե այդ ծառայությունը ներառված է անհատական ծրագրի պլանում (IPP) և անհրաժեշտ է երաշխավորել, որ ծառայությունն ստացված է և հետևյալ չափանիշները բավարարված են:
Հետևյալ չափանիշները նույնպես պետք է պահպանվեն՝

1) Սպառողի տարեկան համախառն եկամուտը աղքատության դաշնային մակարդակի 400 տոկոսի վրա կամ դրանից ցածր է:
2) Ծախսի համար պատասխանատու որևէ այլ երրորդ կողմ չկա:[2]

---

[1] Բարեկեցության և հաստատությունների օրենսգիրք (Welfare և Institutions Code), հոդված 4659.1(c) «Վերադառնալ հիմնական փաստաթղթին»

[2] Բարեկեցության և հաստատությունների օրենսգիրք (Welfare և Institutions Code), հոդված 4659.1(c) «Վերադառնալ հիմնական փաստաթղթին»

## Ի՞նչ տեղի կունենա, եթե մեր ընտանիքի եկամուտը աղքատության դաշնային մակարդակի 400 տոկոսից ավելի է

Այն ընտանիքները, որոնց տարեկան եկամուտը աղքատության դաշնային մակարդակի 400 տոկոսից բարձր է, տարածաշրջանային կենտրոնը կարող է վճարել համավճարումները կամ համապահովագրում, եթե անհրաժեշտ է երեխան պահել տանը կամ հետևյալներից մեկը կամ մյուսը կիրառվում է՝

1) Արտասովոր դեպք է տեղի ունեցել, որն ազդում է ծնողի/խնամակալի/խնամատարի՝ համավճարումը կամ համապահովագրումը վճարելու կարողության վրա կամ բավարարելու այն խնամքը և վերահսկողություն, որի կարիքն ունի երեխան:
2) Աղետալի կորուստ (ինչպես օրինակ բնական աղետներ կա պատահարներ), որոնք ժամանակավորապես ազդում են ծնողի/խնամակալի/խնամատարի՝ համավճարումները կամ համապահովագրումը վճարելու ունակության վրա:
3) Չփոխհատուցվող կարևոր բժշկական ծախսեր, որոնք առնչվում են երեխայի կամ մեկ այլ երեխայի, ով տարածաշրջանային կենտրոնի սպասառու է:[3]

## Տարածաշրջանային կենտրոնն ինչպե՞ս է տեղեկանում, թե որքան է իմ տարեկան համախառն եկամուտը

Դուք պետք է տարածաշրջանային կենտրոնին տրամադրեք աշխատավարձը վաստակողի քաղվածքի W-2 ձևի պատճենը, վճարացուցակի մնացորդների, եկամտահարկի նահանգային փոխհատուցման կամ այլ

---

[3] Բարեկեցության և հաստատությունների օրենսգիրք (Welfare և Institutions Code), հոդված 4659.1(c) «Վերադառնալ հիմնական փաստաթղթին»

եկամտի ապացույցի մասին:[4] Դուք պետք է տարածաշրջանային կենտրոնին ծանուցեք, երբ Ձեր եկամտում փոփոխություն տեղի ունենա, որը կարող է իրավունակության փոփոխության հանգեցնել:[5]

## Ո՞րն է 2014թ. աղքատության դաշնային մակարդակը

| Ընտանիքի անդամներ | **48 սահմանակից նահանգ նահանգ և D.C.** | **Աղքատության մակարդակը 400%** |
|---|---|---|
| 1 | 11,670 ԱՄՆ դոլար | $46,680 |
| 2 | 15,730 | 62,920 |
| 3 | 19,790 | 79,160 |
| 4 | 23,850 | 95,400 |
| 5 | 27,910 | 111,640 |
| 6 | 31,970 | 127,880 |
| 7 | 36,030 | 144,120 |
| 8 | 40,090 | 160,360 |
| Յուրաքանչյուր լրացուցիչ անձի համար, ավելացնել | 4,060 | |

## Ինչպե՞ս կարող եմ հետագա տարիների աղքատության դաշնային մակարդակը գտնել

Աղքատության դաշնային մակարդակի վերաբերյալ տեղեկություններ ստանալու համար կարող եք այցելել այս կայքէջը՝ http://aspe.hhs.gov/poverty/index.cfm: Աղքատության դաշնային մակարդակը՝ 400%-ը

---

[4] Բարեկեցության և հաստատությունների օրենսգիրք (Welfare և Institutions Code), հոդված 4659.1(c) «Վերադառնալ հիմնական փաստաթղթին»

[5] Բարեկեցության և հաստատությունների օրենսգիրք (Welfare և Institutions Code), հոդված 4659.1(c) «Վերադառնալ հիմնական փաստաթղթին»

դաշնային աղքատության մակարդակն է՝ բազմապատկած 4-ով:

## Տարածաշրջանային կենտրոնը կարո՞ղ է օգնել վճարել իմ պահումները՝ համաձայն Լանթըրմընի օրենքի

Այո, 2014թ. հունիսի 20-ից սկսած օրենքը փոխվեց՝ տարածաշրջանային կենտրոններին թույլ տալու վճարել վերևում ընդգծված պահումների համար:[6]

## Գործողությունների գրավոր ծանուցում է պահանջվում, որը պետք է տրվի տարածաշրջանային կենտրոնների կողմից

Եթե Դուք ծառայություն կամ աջակցություն եք խնդրել, օրինակ՝ համավճարման ֆինանսավորում, տարածաշրջանային կենտրոնը 15 օր ժամանակ ունի՝ որոշում կայացնելու առ այն, թե արդյոք պետք է տրամադրի այդ ծառայությունը կամ աջակցությունը, թե՝ ոչ:[7] Տարածաշրջանային կենտրոնն այնուհետև 5 օր ժամանակ ունի՝ Ձեզ գործողությունների կատարման մասին ծանուցում ուղարկելու, եթե նրանք մերժեն Ձեր խնդրանքը:[8] Եթե Դուք և Ձեր տարածաշրջանային կենտրոնը չհամաձայնեք փոխել Ձեր ներկայիս ծառայությունները, ապա տարածաշրջանային կենտրոնը փոփոխություններն սկսելուց 30 օր առաջ պետք է Ձեզ

---

[6] Բարեկեցության և հաստատությունների օրենսգիրք (Welfare և Institutions Code), հոդված 4659.1(c) «Վերադառնալ հիմնական փաստաթղթին»

[7] Welfare & Institutions Code Section 4646(f) «Վերադառնալ հիմնական փաստաթղթին”

[8] Բարեկեցության և հաստատությունների օրենսգիրք (Welfare & Institutions Code), հոդված 4710(b) «Վերադառնալ հիմնական փաստաթղթին»

ծանուցի այդ մասին:[9] Ծանուցումը պետք է Ձեզ տրամադրի հետևյալ տեղեկությունները.

- Գործողությունը, որը տարածաշրջանային կենտրոնը կատարում է.
- Հիմնական փաստեր այն, թէ ինչու է տարածաշրջանային կենտրոնը կայացնում իր որոշումը.
- Գործողությունը կատարելու պատճառը.
- Ուժի մեջ մտնելու ամսաթիվը և
- այն առանձնահատուկ օրենքը, կանոնակարգը կամ քաղաքականությունը, որն աջակցում է այդ գործողությանը:[10]

## Լսման համար դիմում ներկայացնելը

Եթե Դուք արդեն ստանում եք ծառայությունը և համաձայն չեք տարածաշրջանային կենտրոնի որոշման հետև ցանկանում եք շարունակել ստանալ ծառայությունը, ապա պետք է արդար լսում խնդրեք՝ ծանուցումն ստանալուց հետո 10 օրվա ընթացքում:[11] Հակառակ դեպքում հայցը պետք է արվի 30 օրվա ընթացքում:[12]

---

[9] Բարեկեցության և հաստատությունների օրենսգիրք (Welfare & Institutions Code), հոդված 4710 «Վերադառնալ հիմնական փաստաթղթին»

[10] Բարեկեցության հաստատությունների օրենսգիրք, հոդված 4701: Այս տեղեկատվությունը նաև պետք է առկա լինի այն լեզվով, որը Դուք հասկանում եք: «Վերադառնալ հիմնական փաստաթղթին»

[11] Բարեկեցության և հաստատությունների օրենսգիրք, հոդված 4715: «Վերադառնալ հիմնական փաստաթղթին»

[12] Բարեկեցության և հաստատությունների օրենսգիրք (Welfare & Institutions Code), հոդված 4710.5 (a) «Վերադառնալ հիմնական փաստաթղթին»

# Ձեր իրավունքները՝ լսման գործընթացի ընթացքում

Դուք իրավունք ունեք՝

- Տեսնել Ձեր տարածաշրջանային կենտրոնի արձանագրությունները.
- Ներկա գտնվել և վկայություն տալ՝ բանավոր կամ գրավոր.
- Ձեր կողքին ունենալ Ձեր սեփական ընտանիքին, ընկերներին, բժշկին, ովքեր կխոսեն Ձեր անունից.
- Փաստաբան կամ պաշտպանի ներկայություն ապահովել.
- Թարգմանիչ ունենալ, եթե Ձեր մայրենի լեզուն անգլերենը չէ:

## Ձեր լսմանը պատրաստվելը

- Տեղեկություններ հավաքեք, որոնք ցույց կտան, որ Դուք այդ ծառայությունների կարիքն ունեք, որոնք տարածաշրջանային կենտրոնը ցանկանում է փոխել: Համոզվեք, որ տեղեկատվությունը, որն օգտագործում եք, ճշգրիտ է և Ձեր կարիքները մանրամասն բացատրում է: Բացի այդ, գտեք այն մարդկանց, ովքեր ցանկանում են գնալ Ձեր լսմանը և դատավորին պատմել, թե ինչու Դուք այդ ծառայությունների կարիքն ունեք: Համոզվեք, որ այս մարդիկ տեղյակ են Ձեր կարիքներից:
- Լսմանը Դուք կարող եք փաստարկներ բերել, որ իրավունք ունեք, որպեսզի Ձեր կարիքները բավարարվեն՝ Ձեր IPP կամ IFSP նպատակներին և խնդիրներին հասնելու համար, կամ բացատրեք, թե ինչու եք Դուք բավարարում այդ բացառմանը կամ օրենքի բացառմանը:

Հավելյալ տեղեկություններ գտնելու առայն, թե ինչպես պետք է բողոքարկեք տարածաշրջանային կենտրոնի կողմից կայացված որոշումները, կարդացեք մեր հրապարակումը, տարածաշրջանային կենտրոնի համապատասխան գործընթացների և լսման

իրավունքների ամփոփաթերթը (Regional Center Hearing Packet)՝ http://www.disabilityrightsca.org/pubs/F548401.pdf

---

Մենք ցանկանում ենք լսել Ձեզ: Խնդրում ենք լրացնել մեր հրապարակումներին վերաբերող հետևյալ հարցումը և մեզ տեղեկացնել, թե ինչպես ենք մենք աշխատում: [Լրացնել հարցումը]

Իրավաբանական աջակցության համար զանգահարեք 800-776-5746 կամ լրացրեք աջակցության խնդրանքի ձևաթուղթ: Մնացած բոլոր նպատակներով զանգահարեք՝ 916-504-5800 հեռախոսահամարով (Հյուսիսային Կալիֆորնիա), 213-213-8000 (Հարավային Կալիֆորնիա):

*Disability Rights California-ն ֆինանսավորվում է տարբեր աղբյուրներից, հովանավորների ամբողջական ցանկի համար այցելե՛ք՝* http://www.disabilityrightsca.org/Documents/ListofGrantsAndContracts.html.